

ԼՂՀ շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների կողմից բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ծրագիր

Ծրագրի նպատակն է նպաստել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավմանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բնակարանային շինարարության զարգացումը:

Ծրագրի շահառուները 18 տարին լրացած ԼՂՀ քաղաքացիներն են մինչև ԼՂՀ օրենսդրությամբ քաղաքացու համար սահմանված կենսաթոշակային տարիքի լրանալը՝ հետևյալ պայմանների բավարարման դեպքում.

1.Քաղաքացին բնակարան է ձեռք բերում իր բնակության և/կամ հաշվառման բնակավայրում՝ ունենալով (ամուսիններից գոնե մեկը) առնվազն 3 տարվա հաշվառման և/կամ բնակության ժամկետ:

Բնակության և գրանցման ժամկետի սահմանափակում չի նախատեսվում, եթե
1.քաղաքացին բնակարան է ձեռք բերում այն բնակավայրում, որտեղ բնակչության թվաքանակը անհամեմատ քիչ է, քան այն բնակավայրում, որտեղ նա հաշվառված և բնակվում է,
2.քաղաքացին ունի փախստականի կամ վերաբնակչի կարգավիճակ և բնակարան է ձեռք բերում ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության կողմից տրված քաղաքացու՝ սույն ծրագրով սահմանված պետական աջակցություն ստանալու համար նախընտրելի բնակավայրի մասին տեղեկանքում նշված բնակավայրում:

2.Քաղաքացին չի հանդիսանում բնակելի տան կամ բնակարանի սեփականատեր կամ հանդիսանում է սեփականատեր բնակտարածքի, որտեղ հաշվառված բնակվողների մեկ շնչին բաժին է ընկնում մինչև 18,0 քառ. մետր բնակտարածք: Իսկ համատեղ երկու և ավելի ընտանիքներ բնակվելու դեպքում՝ առանձնացող յուրաքանչյուր ընտանիք, անկախ բնակտարածքի մեծությունից:

3.Քաղաքացու կողմից բազմաբնակարան բնակելի շենքից բնակարան ձեռք բերելու դեպքում բնակարանի ընդհանուր տարածքը չի գերազանցում ընտանիքի անդամների մեկ շնչի հաշվարկով 30 քառ.մ., իսկ առանձնատուն ձեռք բերելու դեպքում՝ 40 քառ.մ.:

4.Երիտասարդ և մեկ շնչից կազմված ընտանիքները կարող են օգտվել 'գումարած մեկ' պայմանից՝ քաղաքացու ընտանիքի անդամների թվին պայմանականորեն ավելացվում է մեկ՝ ձեռք բերվող բնակարանի առավելագույն մակերեսը որոշելու համար:

•Երիտասարդ ընտանիք՝ ամուսիններից առնվազն մեկի տարիքը պետական աջակցություն ստանալու Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի գերազանցում 32 տարին,

•Մեկ անձից կազմված ընտանիք՝ 32 տարին լրացած Քաղաքացի, որը պետական աջակցություն ստանալու Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի

գտնվում ամուսնության մեջ, չունի անչափահաս երեխաներ, խնամարկյալներ, ինչպես նաև հոգաբարձության ներքո անձինք:

Քաղաքացին (նրա ընտանիքի անդամը) սույն ծրագրի աջակցությունից կարող է օգտվել միայն մեկ անգամ:

Ձեռք բերվող բնակարանի 1 մետր քառակուսու առավելագույն արժեքը սահմանվում է՝

- բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների համար՝ 250,0 հազ. դրամ,
- առանձնատների համար՝ 280,0 հազ. դրամ:

Փոխառության տրամադրման պայմանները

Փոխառության տարեկան տոկոսադրույքը	1
Փոխառության մարման առավելագույն ժամկետը /ամիս/	216
Բնակարանի գնման կանխավճար /տոկոս/	5

Եկամուտներից կենսաապահովման համար նվազեցվող գումարը կազմում է 35.0 հազ.դրամ:

Աջակցություն ստանալու ընթացակարգը

1. Հայտի լրացումը, փաստաթղթերի ընդունումը

Քաղաքացին լրացնում է համապատասխան հայտ՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

- տեղեկանք բնակության վայրից՝ ընտանիքի կազմի վերաբերյալ,
- ընտանիքի անդամների անձնագրերի կամ ծննդյան վկայականների պատճենները,
- ընտանիքի եկամուտները հիմնավորող տեղեկանքներ,
- բնակարանի առուվաճառքի պայմանագրի կնքման համար անհրաժեշտ կանխավճարի առկայությունը հավաստող փաստաթուղթ,
- սույն ծրագրով սահմանված այլ փաստաթղթեր:

2. Ֆինանսական կոմիտեի որոշումը

Փաստաթղթերի ամբողջությունը և դրանցում ներկայացված տեղեկությունների հավաստիությունը ստուգելուց հետո հիմնադրամի ֆինանսական կոմիտեն ընդունված Հայտը 10-օրյա ժամկետում քննարկում և կայացնում է համապատասխան որոշում:

3. Բնակարանի առուվաճառքի և փոխառության պայմանագրերի կնքումը

Հիմնադրամը, դրական որոշում ընդունած հայտերի մասով, որոնք ուժի մեջ են մտնում Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից

հաստատվելուց հետո, Քաղաքացիների հետ կնքում է բնակարանի առուվաճառքի և փոխառության պայմանագիր՝ նախապես ստանալով վճարվող կանխավճարի սահմանված գումարը: Առուվաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

4. ԼՂՀ ԿԱ-ից սեփականության իրավունքի գրանցման վկայականի ստացումը

Քաղաքացին 15 օրացուցային օրվա ընթացքում ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում գրանցում է առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքները և սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը ներկայացնում Հիմնադրամ:

5. Անշարժ գույքի գրավի պայմանագրի կնքումը

Հիմնադրամը Քաղաքացու հետ կնքում է անշարժ գույքի գրավի /հիփոթեքի/ պայմանագիր՝ նոտարական վավերացմամբ՝ ի ապահովումն կնքված նպատակային փոխառության պայմանագրի: Քաղաքացին 15 օրացուցային օրվա ընթացքում գրավի պայմանագրից ծագած իրավունքը գրանցում է ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում և անշարժ գույքի (բնակարանի) գրավի վկայականը ներկայացնում Հիմնադրամ:

6. Փոխառության գումարի տրամադրումը

Հիմնադրամը երկօրյա ժամկետում փոխառության գումարը տրամադրում է Քաղաքացուն, որն անմիջապես առուվաճառքի պայմանագրի հիման վրա գումարը փոխանցում է վաճառողի (Հիմնադրամի) համապատասխան հաշվին:

Հիմնադրամը բնակարանը հանձնում է Քաղաքացուն՝ հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

7. Նոր բնակարանում հաշվառումը և նախկին բնակարանի օտարումը

Պետական աջակցությամբ բնակարանն ձեռք բերած Քաղաքացին »ռամսյա ժամկետում պարտավոր է ապահովել այն անձանց հաշվառումը այդ բնակարանում, որոնց հաշվարկով ստացել է աջակցությունը: Նույն եռամսյա ժամկետում Քաղաքացին պարտավոր է օտարել՝ մինչև աջակցությունը սեփականության իրավունքով իրեն և իր հետ համատեղ աջակցություն ստացած Քաղաքացիներին պատկանող բնակտարածք(ներ)ը (նախկին բնակարանը)՝ տվյալ պահին գործող շուկայական միջին արժեքներից ոչ ցածր արժեքով, և գործարքի արդյունքում ստացած գումարն արողջությամբ ուղղել պարտավորության մարմանը:

8. Մոնիթորինգ

Հիմնադրամը պետական աջակցություն ստացած Քաղաքացիների մոտ պարբերաբար իրականացնում է փոխառության նպատակային օգտագործման և ֆինանսական հնարավորությունների ընթացիկ ուսումնասիրություն՝ մոնիթորինգ: